ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2012 թվականի N 5-Ն

ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով.

Ավագանին որոշում է

Մարմարիկ համայնքի ավագանու 2011թ-ի դեկտեմբերի 14-ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N20-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Անուն, ազգանուն	Կողմ (4)	Դեմ ( )	Ձեռնպահ ( )
Կոմիտաս Հունանյան			
Կարեն Մելոյան			
Արմեն Սեփոյան			
Ռոման Հարությունյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Մարմարիկ համայնքի ավագանու
2012 թվականի հունվարի 26-ի N 5-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխա՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թուլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար՝ 5000 դրամ:

2) սույն կետի առաջին ենթակետով չնախատեսված օբեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 2000 դրամ:

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 4000 դրամ:

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 5000 դրամ, ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 1500 դրամ:

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 2000 դրամ:

2, Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

2) բացի օբեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն հավելվածի իմաստով, այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացոթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրքը սահմանել՝ 50000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24/00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբեկտների համար՝ 25000 դրամ:

2) հանրային սննդի և զվարճանքի օբեկտների համար՝ 50000 դրամ:

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ:

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնորինականեր տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ

մշակելու ու հաստատելո, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 100 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ 5000 դրամ: